ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

18.01.2018թ.

ՔԱՂՎԱԾՔ

ԾՈՎԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՏՈՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 23-Ն ՈՐՈՇՈՒՄԻՑ (ՆԻՍՏ N 9)

համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի պաշտոնի դրույքաչափը սահմանել 105,0 հազ. դրամ / ՀՀ Աժ պատգամավորի պաշտանային դրույքաչափի 15.87% -ի չափով / :

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԵՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈՎԻԿ
3. ԳՈՒԼԱՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ՏԱՐՈՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
7. ՋԱՆԻԿՅԱՆ ԴԱՎԻԹ
8. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

Աշխատակազմի քարտուղար՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

18.01.2018թ.

ՔԱՂՎԱԾՔ

ԾՈՎԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի «ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ <<ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿԻ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ< ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 24-Ն ՈՐՈՇՈՒՄԻՑ (ՆԻՍՏ

համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել և հաստատել համայնքապետարանի աշխատակազմի և <<Ծովագյուղի մանակապերտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն կից հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԵՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈՎԻԿ
3. ԳՈՒԼԱՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ՏԱՐՈՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
7. ՋԱՆԻԿՅԱՆ ԴԱՎԻԹ
8. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

Աշխատակազմի քարտուղար՝

Հավելված
Հաստատված է Ծավագյուղ համայնքի
ավագանու 07.12.2017թ. N 24-Ն որոշմամբ

Համայնքապետարանի աշխատակազմ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 15
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

հ/հ	ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ դրամով /
1	Համայնքի ղեկավար	1	105 000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	78 000
3	Համայնքի ղեկավարի օգնական	1	78 000
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	78 000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

5	Աշխ. Քարտուղար /1.2-1/	1	84 000
6	Գլխ. Մասնագետ /2.3-1/	1	82 000
7	Գլխ. Մասնագետ /2.3-2/	1	82 000
8	Գլխ. Մասնագետ /2.3-3/	1	82 000
9	Գլխ. Մասնագետ /2.3-4/	1	82 000
10	Առաջատար մասնագետ /3.1-1/	1	80 000
11	Առաջատար մասնագետ /3.1-2/	1	80 000
12	Առաջին կարգի մասնագետ	1	78 000

ՏԵԽ. ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

13	Զրագծի սպասարկման բանվոր	1	78 000
14	Հավաքարար	1	78 000
15	Պահակ	1	78 000
16	Վարորդ	1	80 000

17	Վարորդ	1	80 000
	Ընդամենը	17	

<<Ծովագյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 32,

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրուքաչափերը.

h/h	ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ դրամով /
1	Տնօրեն	1	85000
2	Գլխ. հաշվապահ	1	83000
3	Մեթոդիստ	0.5	39000
4	Բուժքույր	1	78000
5	Սոցիոլոգ	1	78000
6	Լոգոպետ	1	78000
7	Դաստիարակ	5	82000
8	Դաստիարակի օգնական	4	78000
9	Երաժշտական ղեկավար	1	78000
10	Խոհարար	1	78000
11	Խոհարարի օգնական	1	78000
12	Լվացարար	1	78000
13	Դերձակ	0,5	39000
14	Տնտեսվար	1	78000
15	Դռնապահ	1	78000
	ԸՆԴԱՄԵՆԸ	21	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

18.01.2018թ.

ՔԱՂՎԱԾՔ

ԾՈՎԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի «ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 25-Ն ՈՐՈՇՈՒՄԻՑ (ՆԻՍ N 9)

համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն կից հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԵՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈՎԻԿ
3. ԳՈՒԼԱՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ՏԱՐՈՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
7. ՋԱՆԻԿՅԱՆ ԴԱՎԻԹ
8. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

Աշխատակազմի քարտուղար՝

Հավելված

Հաստատված է Ծովագյուղ համայնքի

Ավագանու 07.12.2017թ. N 25-Ն որոշմամբ

Համայնքի ղեկավար՝ Վ. Գնորգյան

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Տեղական տուրքերի դրույքաչափերը

1. Ծովագյուղ համայնքում սահմանել տեղական տուրքերի հետեւյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների եւ ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի եւ շինությունների համար՝

մինչեւ 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաեւ մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական եւ արտադրական նշանակության շենքերի եւ շինությունների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի եւ շինությունների համար՝

- 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝ ինը հազար դրամ,

-501-ից մինչեւ 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ ,

- 1001-ից մինչեւ 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝տասնհինգ հազար դրամ

գ. ոչ հիմնական շենքերի եւ շինությունների համար՝

- մինչեւ 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝ ինը հարյուր դրամ,

- 20 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

2) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների եւ քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդմանթույլտվություն չպահանջվող դեպքերի)թույլտվության համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ,

5) համայնքի վարչական տարածքում ոգելից եւ ալկոհոլային խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ,

-26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հինգ հարյուր դրամ,

-51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար դրամ ,

-101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան մեկ հազար դրամ,

-բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ,

-26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հինգ հարյուր դրամ,

-51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար դրամ ,

- 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան մեկ հազար դրամ,

14. ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

Տեղական վճարների դրույքաչափերի սահմանել

1) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի եւ շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձեւակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձեւակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ,

3) համայնքի տնօրինության եւ օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու եւ վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հազար դրամ,

4) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների եւ աճուրդների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝հազար դրամ,

5) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության ամսեկան վճար սահմանել.

5.1) Առևտրի / այդ թվում ՝ շուկաների, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների համար՝ 20 դր/քմ,

5.2) Արտադրական , արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար ՝ 5 դր/քմ,

5.3) Կրթական , մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների համար՝ 2 դր/քմ: